ՆՈՐԻՑ ԼԱՐՎԱԾ ՎԻՃԱԿ Է ԱՐՑԱԽՈՒՄ

Նորից հուզված է Արցախը: Նորից բորբոքված են կրքերը: Նորից ծայր են առել գործադուլները:

Եվ այս արդեն որերորդ անգամ: Ոգու ժայթքումը զրանցելը հաճելի գործ չէ և ոչ էլ ունի ձև ու մարմին: Մաշում է սիրտը, գործում սարսափելի ուժով, բայց մնում անկոտրելի: Նույնիսկ տարերային ստորերկրյա ընդվզումն իր լափաբերականներն ունի՝ առաջին հուժկու ցնցմանը փոխարինում են թույլերը, ծառս եղած ուժերն աստիճանաբար պարպվում, մաքրվում են: Իսկ մարդը մի՞թե ի վիճակի չէ անսալու իր ձայնին, առճակատմանը հակադրելու իր կամքը:

Ի վիճակի է, միայն թե...

Երբ ԼՂԻՄ-ի հարցի շուրջը ճգնաժամը իր գագաթնակետին էր հասել, թեկուզ ուշ, գտնվեց նրա վերացման ընդունելի ձև՝ մարզում ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե: Բայց դա ձև էր, որ պետք է լցվեր բովանդակությամբ ու տարողությամբ: Փաստորեն նորից պետք է երկու ժողովուրդների միջև հիմնվեր վստահության կամուրջ:

Երկու շաբաթ առաջ Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունը որոշում ընդունեց մարզի ադրբեջանաբնակ մի շարք գյուղերում բնակելի տներ, արտադրական և այլ բնույթի օբյեկտներ կառուցելու մասին: Արտաքնապես այդ վճիռը ներկայացվեց որպես «հոգատարություն» մարզի սոցիալ-տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ: Միայն Ստեփանակերտի մեջ մտնող Կրկժան ավանում պետք է վեր բարձրանային կարի և տրիկոտաժի ֆաբրիկաներ 500 տեղով, ստեղծվեր ավտոշարասյուն, ընդլայնվեր տեղում գործող արդյունաբերական մասնաճյուղը, կառուցվեր դպրոցական շենք: Բնակելի տներ և համանման օբյեկտներ պետք է կառուցվեին Ասկերանի շրջանի Խոջալու, Շուշիի շրջանի Մալիբեկլու, Մարտունու շրջանի ադրբեջանաբնակ գյուղերում:

Դեռ որոշման թանաքը չչորացած, հիշյալ գյուղերում հայտնվեցին շինարարները, հռնդացին բուլդոզերները, հարևան շրջաններից քար ու շաղախ սկսեցին բերել ավտոմեքենաները:

Անտեղյակ մարդուն այսպիսի «բարի» գործին հակառակվելը թերևս շատ տարօրինակ ու զարմանալի թվա: Եվ գտնվեցին ինֆորմացիայի աղբյուրներ, ցավոք, նրանց մեջ և ՏԱՍՍ-ը, որ շտապեցին երկրով մեկ հայտարարել Ադրբեջանական ԽՍՀ կառավարության «բարի» նախաձեռնության մասին:

Իսկ մարդիկ նորից սկսեցին բողոքել: Նախ նրանց արդարացիորեն վրդովմունք պատճառեց կանխամտածված ձևով ադրբեջանաբնակ գյուղերի զատումը և դրանցում շինարարության ծավալումը: Կրքերն ավելի բորբոքվեցին, երբ պարզ դարձավ, որ դա արվում է օրենքի շրջանցումով, առանց տեղական իշխանությունների համաձայնության: Հատուկ կառավարման կոմիտեն էլ հաստատեց իր անիրազեկությունը:

Եվ այս ամենը կատարվեց այն դեպքում, երբ կար դառը փորձ, թե ինչի կարող է հասցնել չմտածված, ավելի ճիշտ ազգային պատկանելության միտումով ձեռնարկված ամեն մի նոր քայլ: Դեռ անցյալ տարվա վերջին, չգիտես որտեղից որտեղ, Բաքվում հիշեցին Շուշիի առողջարանային համալիրի զարգացման մասին հանրապետության կառավարության կողմից 1976 թ. ընդունված որոշումը և վճռեցին չկատարվածը (իսկ դա շատ էր) իրականացնել մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը հատկացված միջոցների հաշվին: Հենց այդ ժամանակ էլ լույս աշխարհ եկավ այսօրվա որոշման առաջին տարբերակը:

Այս ծրագրերի իրականացումը դրանց հեղինակները ճգնում են արդարացնել ադրբեջանաբնակ գյուղերում ազատ աշխատուժի օգտագործման պատրվակով: Բարի նպատակ: Բայց ինչո՞ւ ընդհանուրից զատել ադրբեջանաբնակ գյուղերը, ինչո՞ւ հավասարապես չհոգալ բոլորի մասին, որը կլինի ոչ միայն արդարացի, այլև կնպաստի ազգամիջյան հարաբերությունների նորմալացմանը: Ինչո՞ւ աչք փակել այն տխուր փաստերի առջև, որ մարզի հայաբնակ ոչ մի գյուղում կնճռոտ բազմաթիվ հարցերի լուծման համար դեռ մատը մատին չի խփված, դեռ թղթի վրա է մնում մի շարք բնակավայրերում արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղեր բացելու մտադրությունը:

Եվ չապաքինված վերքերին ավելացնում են նորերը: Եթե անսալու լինենք ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում Հ. Ա. Ալիևի ելույթին, ապա ոչ միայն Ադրբեջանում, այլև Հայաստանում և ոչ մի հատված իր տնտեսական պոտենցիալով չի կարող չափվել ԼՂԻՄ-ի հետ:

Եվ, ցավոք, տխուր վիճակը ներկայացվել է որպես ազգային հարցի լենինյան լուծման լավագույն, ընդօրինակման արժանի օրինակ: Բայց զուր չեն ասում, թե մախաթը պարկում չես թաքցնի: Ճշմարտությունն ասեղի պես ծակելու հատկություն ունի և դուրս է ցցվում առանց դժվարության:

Մարզում հատուկ կառավարման ձև մտցնելուց հետո անցել է մոտ չորս ամիս: Անշուշտ, դա քիչ ժամանակ է: Բայց չէ՞ որ դա բավական էր, որ այսօր լիներ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հստակ, կոնկրետացված ծրագիր:

Ե՞րբ պետք է ավարտվի կարևոր օբյեկտների նախագծերի մշակումը, ո՞վ և ե՞րբ պետք է սկսի և իրականացնի դրանց շինարարությունը: Այս և կարևոր այլ հարցերի մասին կոմիտեում դեռ չգիտեն:

Հատուկ կառավարման կոմիտեին չհաջողվեց նաև բեկում մտցնել աշխատանքում: Խոստումները, հարցազրույցները, ճառերը, որոշումները շատ են, կատարած գործը՝ քիչ: Խոստումներից պարզապես հոգնել, ձանձրացել է արցախցին: Կապիտալ շինարարության ընթացիկ տարվա պլանը ավելացել է շուրջ երեք անգամ, բայց ի՞նչ օգուտ դրանից, երբ կատարված աշխատանքների ծավալը զիջում է վերջին տարիների նույնիսկ միջին մակարդակին: Մարզի շինարարական ամենամեծ կազմակերպությունը՝ № 9 շինտրեստը առ այսօր չի իրացրել նույնիսկ տարվա պլանով իրեն հատկացված միջոցների 10 տոկոսը: Իսկ անցել է արդեն չորս ամիս: Չեն բավականացնում քարը, մյուս շինանյութերը: Շինարարները մեկ օր աշխատում, երկու օր պարապ նստում են, աչքները հառած, թե երբ հորիզոնում կերևա շինանյութ բերող հերթական մեքենան: Ոչ թե մետրերով, այլ սանտիմետրերով են բարձրացվում տարիներ շարունակ կառուցվող շենքերի պատերը: Կառույցների մեծ մասը կոնսերվացված է: Եվ իզուր չէ, որ մարդիկ ասում են՝ խոստումը շատացավ, մատակարարումը՝ վատացավ: Ահա այդ վկայող մի այլ աներկբա օրինակ: ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած որոշումից հետո անցած մեկ տարում մարզային արտադրական ավտոմիավորումը ոչ մի նոր մեքենա չի ստացել, կիսով չափ կրճատվել է պահեստամասերի մատակարարումը: Եվ դա այն ժամանակ, երբ ավտոմեքենաներ են տրամադրվել նաև մարզում տեղակայված լրացուցիչ զինվորական մասերին:

Անշուշտ, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման գործում քիչ չեն բյուրոկրատական դժվարությունները: Դրա օրինակը կարող է լինել ԲԹԻ օդու արտադրության արգելքի պատնեշի խորտակումը: Միլիոններն այլևս չեն կորչի, մեծ օգուտ կտան մարզին: Շատ հարցերում տիրում է սպասողական վիճակ: Փաստորեն չեն գործում մարզկոմի ապարատի և մարզային խորհրդի գործկոմի բաժինները: Մարդիկ չգիտեն նոր պայմաններում իրենց պարտականությունները:

Թերևս շատ թերություններ կարելի էր հաղթահարել, եթե գերիշխեր բացախոսությունը, ամուր լիներ կապը հասարակայնության հետ: Զարմանալի է, բայց փաստ, որ անցած չորս ամսում կոմիտեն իր պարտքը չի համարել այս կամ այն հարցի առթիվ խորհրդակցելու կուսակցության մարզկոմի անդամների, մարզային խորհրդի դեպուտատների, մանավանդ հասարակ մարդկանց հետ, որոնք մոտ են կանգնած արտադրությանը, ավելի լավ գիտեն մարդկանց տրամադրություններն ու հոգսերը:

Լեռնային Ղարաբաղի մասին միութենական ատյանների կողմից վերջին մեկ տարում ընդունված որոշումներում միշտ էլ նշվել է Արցախի պրոբլեմների լուծման գործում Հայկական ԽՍՀ-ի ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը: Խոսքն առաջին հերթին արդյունաբերական ձեռնարկությունների, գիտահետազոտական ինստիտուտների մասնաճյուղերի ստեղծման մասին է: Ցանկալի կլիներ օգնությունը հատկապես մարզում եղած քարհանքերի հզորություններն ընդլայնելու, քարի, ավազի, տեղական այլ շինանյութերի նոր հանքավայրեր որոնելու և շահագործելու բնագավառում: Արագացնել է պետք առաջնահերթ օբյեկտների նախագծերի կազմումը, մանավանդ, որ դրանք պետք է անցնեն նաև հասարակայնության կողմից քննարկման և հավանության արժանանալու փուլը: Կարծում եմ, պետքական կլիներ Հայկական ավիավարչության միջամտությունը Ստեփանակերտի օդանավակայանի ընդլայնման, գոնե լոկացիոն սարքավորումների տեղադրման գործում, քանի որ թռիչքների իրագործման բախտը պայմանավորված է Աղդամի օդանավակայանի ավիատորների կամքով:

Այսպիսին է այսօր իրավիճակը մարզում: Եվ նորից, ինչպես միշտ նման դեպքերում, ակտիվացել են լրատվության միջոցները: Մինչդեռ պետք է ցուցաբերել անհրաժեշտ իրազեկություն և անկողմնակալություն, հատկապես միութենական մամուլը: Այդ դեպքում չէին բորբոքվի կրքերը, չէր շիկանա մթնոլորտը: Ո՞ւմ էր պետք համամիութենական հեռուստատեսությամբ օրերս տրված հաղորդման այն մասը, թե մարզի հայաբնակ գյուղերի զարգացման համար այս տարի հատկացված է 96 միլիոն, ադրբեջանաբնակ գյուղերին՝ 4 միլիոն ռուբլի: Ե՞րբ է լսված, որ կապիտալ միջոցները հատկացվեն ոչ թե ըստ ռեգիոնների, այլ ազգային պատկանելության բնակավայրերի: Չէ՞ որ դրանք հիմնականում տրված են մարզում ճանապարհների, ջրատնտեսական օբյեկտների կառուցման, գազամուղների շինարարության համար, բնագավառներ, որ ազգային պատկանելություն չունեն:

Ելնելով ստեղծված իրադրությունից, կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի և շրջկոմների առաջին քարտուղարները, շրջխորհուրդների նախագահները, մարզից ԽՍՀՄ առանձին դեպուտատներ ու հատուկ կառավարման կոմիտեի անդամներ ռեգիոնում իրավիճակը ներկայացնող բաց նամակով դիմել են ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ Մ. Ս. Գորբաչովին: Արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության կամքն ու իղձը, նրանք պնդում են Ադրբեջանական ԽՍՀ-ի վարչական ենթակայությունից ԼՂԻՄ-ի անհապաղ, ռեալ դուրսբերման անհրաժեշտությունը և գտնում են, որ հարցի առավել ճիշտ լուծումը եղել և մնում է ԼՂԻՄ-ի վերամիավորումը Հայաստանի հետ: Նրանք միաժամանակ հատուկ դիմումով դիմել են մարզի աշխատավորներին, որում կոչ են անում ցուցաբերել համբերություն և տոկունություն, դրսևորել իմաստնություն, չենթարկվել պրովոկացիայի...

Նշվում է, որ միայն խաղաղ ուղիների որոնումը, ղարաբաղյան շարժումը դեմոկրատական հունի մեջ պահելը կարող են տանել դեպի մեր ժողովրդի իղձերի և կամքի իրականացում:

Առայժմ ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեն միջոցներ է ձեռնարկում մարզում դրությունը կայունացնելու, ազգամիջյան երկպառակության հողի վրա ընդհարումները կանխելու համար: Դադարեցված է մարզի տարածքում օրենքով չարտոնված օբյեկտների շինարարությունը:

Եղիշե ՍԱՐԳՍՅԱՆ
Ստեփանակերտ